## ԱՆԸՆԴՀԱՏ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ընթերցական յաջորդութեան Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց.

Հայաստան աշխարհը՝ իւր Քրիստոնէութեան յառաջնութեան պատուով, և յատկապէս առիթով մը մեր փրկիչ Յիսուսէն արժանացած փառքով, ունի նա և այս մեծ պարծանքը, որ իւր Ս. Եկեղեցւոյն հիմը՝ Քրիստոսի և Ս. Առաքելոց քարոզութիւններով դրուելէն և հաստատուն կանգնուելէն ՚ի զատ Առաքեալներէն սկսելով՝ անոնց (առաքելական) յաջորդութեան անընդհատ շարունակութիւնը երբէք չէ կորուսած բաց ՚ի զանազան տեղերէ նահանգներէ և քաղաքներէ, գլխաւորապէս ՚ի Կեսարիա։

Թէպէտ եղաւ ժամանակ՝ որ Քրիստոնէութիւնը ՚ի Հայաստան թէ Աբգար թագաւորին միջոցով և սրտեռանդն օժանդակութեամբ և թէ յետոյ՝ Թովմաս՝ Թադէոս՝ Բարթուղիմէոս՝ Սիմոն Կանանացի և Յուդայ Թադէոս Առաքելոց գրաւոր և բանաւոր քարոզութեանց ջանքերով և ճիգերով սկզբնաւորութեան պայծառ լուսէն և ընդհանուր ծաւալումէն զրկուելով, օր առ օր կռապաշտութեան և հալածանաց ... երեսէն նուազանալու վտանգներու վիճակած և ենթակայ եղած էր, բայց և այնպէս՝ երբէք և երբէք չէ պակսած, և ըստ խոստման փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որոյ Աստուածային և ամենազօր պաշտպանութեան և հսկողութեան շնորհիւ ու ողորմութեամբ իւր ՚ի թաքուն այդին անդին կ՚յարատեւէր, ինչպէս որ ներքին և արտաքին պատմութիւնները՝ այս մասին զմեզ լաւ համոզելու համար՝ շատ օրինակներ և ապացոյցներ ընծայել չեն զլանար, երբ հետաքրքրութեամբ և արժանաւոր ուշադրութիւնով փնտռենք, ու մեր մտքերը ըստ ամենայնի առաւելապէս կ՚լուսաւորեն. յորոց երկուքը յառաջ բերելը ՚ի հաստատութեան խնդրոյս կարևոր և պատշաճ կ՚համարիմ։

Ստեփաննոս Օրբէլեան՝ Սիւնեաց նահանգին Քրիստոնէից համար գրած պատմութեան մէջ կը յիշէ թէ, "Անոնք այդին անդին բնակելով անտէրունչ կը կենային ու կ՚մնային. և ոմանք Գաւառա լեռը փախչելով միայնութեամբ իրենց կեանքը կանցուցանէին. շատ ժամանակներով մինչև Սուրբ Լուսաւորչին գալը և համայն Հայոց աշխարհը լուսաւորելը, շատերուն կ՚սորվեցնէին (Քրիստոնէական կրօնքը և հաւատք.։)

Այնպէս Խորենացին սուրբ Լուսաւորչին սնունդը և վարքը պատմելով (նորա մօր առթիւը) իմաստասիրել և մակաբերել կ՚տայ մեզ թէ, Գամիրաց աշխարհը, Սեբաստիոյ և Կեսարիոյ կողմերը դեռ Քրիստոնէութեան լոյսը տարածուած կ՚ունէր.

Շարունակելի